ԽԱՉԱԿ ՎՐԴ. ՊԱՐՍԱՄԵԱՆ

ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՕԾՈՒՄՆԵՐԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՕԶՆԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԺԱՄԱՆԱԿ

Հայաստանեայց եկեղեցւոյ մկրտութեան խորհուրդի այսօրուան արարողութեան[1] եւ նաեւ մկրտութեան խորհուրդը պարունակող հնագոյն Ձեռագիր Մաշտոցին մէջ[2] իւղի օրհնութեան քարոզի եւ աղօթքի մը կը հանդիպինք: Այս քարոզը եւ աղօթքը, մկրտութեան խորհուրդի արարողութեան մէջ, ջուրի օրհնութենէն անմիջապէս ետաջ կը գտնուին: Իւղի օրհնութեան այս աղօթքին բովանդակութիւնը հետաքրքրական է, քանի հոն կայ օծման մասին ակնարկութիւն մը:

«Աւազանին առջեւ երթալով. սուրբ իւղը պատրաստ ունենալով Սարկաւագը կը քարոզէ.
Եւ նաեւ ամենասուրբ Հոգւոյն շնորհքներուն այս իւղին մէջ իջնելուն համար Տիրոջ աղօթենք:

Երեք անգամ Տէր ողորմեա.
Քահանան այս աղօթքը կ'ըսէ:

Օրհնուած ես, մեր Տէր Աստուածը

---

[1] Մաշտոց յորում աւանդին արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան Սուրբ Եկեղեցւոյս Հայոց (Երուսաղէմ 1961):

[2] Մաշտոցի հնագոյն ձեռագիրները, Վենետիկի Մխիթարեան Ձեռագրատան թիւ 320 ձեռագիրը եւ նաեւ Երեւանի Մատենադարանի թիւ 1001 ձեռագիրը (եւ նաեւ Վենետիկէն կարգ մը կարեւոր ձեռագիրներ) առաջին անգամ ըլլալով հրատարակեց Հ. Սահակ Ծեմ-ճեմեան, «Կանոն Մկրտութեան», Բազմավէպ 129 (1971), 36—48; 130 (1972), 211—230, 400—419: Հնագոյն ձեռագիր Մաշտոցներու (Վենետիկ Ձեռ. Թիւ 320 եւ Երեւան Ձեռ. Թիւ 1001) նոր հրատարակութիւնը (կարգ մը սրբագրութիւններով) Գերմաներէն թարգմանութեամբ ու մանրամասն ուսումնասիրութեամբ կատարեց G. Winkler, Das Armenische Initiationsrituale Entwicklungsgeschichtliche und liturgievergleichende Untersuchung der Duellen des 3. bis 10. Jahrhunderts (=Orientalia Christiana Analecta 217, Rome 1982): Անգլերէն թարգմանութիւնը կատարած էր F. C. Conybeare Rituale Armenorum. Being the Administration of the Armenian Church together with the Greek Rites of Baptism and Epiphany, Edited from the Oldest Manuscripts (Oxford 1905), 36—108:

Դուն, որ քեզի համար ժողովուր մի ընտրեցիր քահանայութեան եւ
թագաւորութեան համար. իբր սուրբ եւ սեպհական ժողովուրդ.
եւ որուն համաձայն նախապէս արդէն քահանաներ եւ թագաւորներ եւ
մարգարէներ օծեցիր այսպիսի ամենասուրբ իւղով:

Եւ հիմա քեզի կ'աղաչենք բարերար Տէր.
ղրկէ Սուրբ Հոգիիդ շնորհքները այս իւղին մէջ.
որպէսզի այն որ ասով կ'օծուի, անոր համար ըլլայ
դէպի սրբութիւն հոգեւոր իմաստութեան...»[3]

Յիշեալ քարոզը եւ աղօթքը կ'ակնարկեն այն իրողութեան, թէ նախապէս այս նոյն տեղը, այսինքն մկրտութենէն առաջ, իւղի օրհնութիւն մը գոյութիւն ունէր, ու օրհնութիւնէն անմիջապէս ետք օծում: Աղօթքի բնագրին ուսումնասիրութիւնը յստակ կը պարզէ այս ենթադրութիւնը.

«Եւ հիմա քեզի կ'աղաչենք բարերար Տէր.
ղրկէ Սուրբ Հոգիիդ շնորհքները այս իւղին մէջ, որպէսզի այն որ ասով
կ'օծուի, անոր համար ըլլայ դէպի սրբութիւն հոգեւոր իմաստութեան...»

Այս բնագիրը այն պարագային միայն իմաստ ունի, երբ գիտենք թէ՝ օծման մը հետ կապուած է: Ինչպէս հետեւեալ հատուածը կ'ակնարկէ «այն որ ասով կ'օծուի»: Նաեւ հատուածին մէջ քահանայի, թագաւորի եւ մարգարէի մասին եղած յիշատակութիւնը «Եւ որուն համաձայն նախապէս արդէն քահանաներ եւ թագաւորներ եւ մարգարէներ օծեցիր այսպիսի իւղով», նոյնպէս օծման մը կ'ակնարկէ: Քահանաներու, թագաւորներու եւ մարգարէներու մասին հոս յիշուած յարաբերութիւնը, ընդհանուր պատկերաւորում մըն է, որ կը գտնուի գրեթէ բոլոր աւանդութեանց մկրտութեան խորհուրդներուն մէջ: Prof. Gabriele Winklere-ի կողմէ կատարուած ուսումնասիրութիւնները ցոյց կու տան թէ՝ Ասորական եւ Հայկական հնագոյն աղբիւրներուն մէջ քահանաներու, թագաւորներու եւ մարգարէներու պատկերաւորումը, մկրտութեան խորհուրդին մէջ, մկրտութենէ անմիջապէս առաջ կատարուող օծման հետ կը հաղորդակցի[4]: Իսկ Ասորական եւ Հայկական այս սովորութեան հակառակ Յունական եւ Լատինական աւանդութեանց մէջ այս պատկերաւորումը կը հաղորդակցի յետ մկրտութեան կատարուած օծման հետ:

Ըստ Հայ եկեղեցւոյ ներկայ սովորութեան, մկրտութեան խորհուրդին մէջ միայն մէկ օծում գոյութիւն ունի, եւ այդ աւազանին մէջ երախային մկրտուելէն ետք կը կատարուի: Այս օծումը դրոշմ կը կոչուի: Իւղը որ դրոշ-

---

[3] Այս հատուածը Winkler-ի հրատարակութեան հայերէն գրաբար բնագրին վրայէն աշխարհարարի թարգմանուեցաւ, Das armenische Initiationsrituale, 198-200 (տողք 121—130):

[4] G. Winkler, Das armenische Initiationsrituale; eadem, „The Original Meaning of the Prebaptismal Anointing and Its Implication", Worship 52 (1978), 24—45; eadem, „The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", II. Symposium études syriaques Paris 1976, (=Orientalia Christiana Analecta 205, Rome 1978), 317—324; eadem, „Zur frühchristlichen Tauftradition in Syrien und Armenien unter Einbezng der Taufe Jesu", Ostkirchliche Studien 27 (1978), 281—306.

մելու համար կ'օգթսագործուի, կը կոչուի միւռոն: Միւռոնը ամէն եօթը տարին անգամ մը կաթողիկոսն է որ կ'օրհնէ[5] եւ ոչ թէ մկրտող քահանան:

Կարգ մը բանասէրներ ենթադրեցին թէ՝ Հայ եկեղեցւոյ մկրտութեան խորհուրդին մէջ նախքան մկրտութիւն գոյութիւն ունէր օծման արարողութիւն մը[6], սակայն այս հարցի կապակցութեամբ լաւագոյն ուսումնասիրութիւնները կատարեցին, նախ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան բանասէր, երիտասարդ հոգեւորականներէն Հ. Սահակ Ճեմճեմեան, եւ ապա Հայ ծիսագիտութեան մասնագէտ՝ Prof. Gabriele Winkler.

Հ. Սահակ Ճեմճեմեան առաջինն էր, որ Հայ եկեղեցւոյ երախաներու օծման սովորութեան մասին կարեւոր եւ շահագրգռական պրպտումներ կատարեց, ու անոնց արդիւնքները 1967 թուին Բազմավէպի մէջ հրատարակեց[7]: Ճեմճեմեան իր այս ուսումնասիրութեանց համար իբրեւ հիմնական աղբիւր օգտագործած է Հայաստանեայց Եկեղեցւոյ ամենանշանաւոր կաթողիկոսներէն Յովհաննէս Օձնեցիի (717—728) գրութիւնները[8]: Իսկ Ճեմճեմեանի օգտագործած մնացեալ աղբիւրները, մեծ մասամբ Կիլիկիոյ շրջանէն են: Շրջան մը, ուր Հայկական ծէսէն ներս Լատինական ազդեցութիւններ կ'ակնկալուին: Մի ուրիշ կարեւոր կէտ, Ճեմճեմեան իր ուսումնասիրութեանց մէջ միմիայն հայկական աղբիւրներ կ'օգտագործէ՝ առանց միւս Արեւելեան եկեղեցիներու ծիսական սովորութիւնները քննելու:

Հ. Ճեմճեմեան իր յօդուածին մէջ Յովհաննէս Օձնեցի Կանոնները ու Ատենաբանութիւնը եւ նաեւ ուշ շրջաններու հայկական աղբիւրները քննելէ ետք կը հասնի հետեւեալ եզրակացութեան.

1. Հայ Եկեղեցւոյ մկրտութեան խորհուրդի սկզբնական օծումը Երախաներու օծումն էր: Այս օծումը մկրտութեան օրը եկեղեցւոյ դռան առջեւ (եկեղեցիէն դուրս) նախքան հրաժարումը եւ խոստովանանքը կը կատարուէր: Երախաներու օծման համար գործածուած իւղը քահանան օծումէն առաջ կ'օրհնէր: Այս օծումը Հայ եկեղեցւոյ աւանդութեան մէջ յետագային մոռացութեան մատնուեցաւ:

2. Յովհաննէս Օձնեցին էր, որ իր բարեկարգութեանց ընթացքին երախաներու օծման սովորութիւնը մկրտութեան արարողութեան մէջ վերահաստատեց:

---

[5] Միւռոնի օրհնութեան պատմութիւնը դեռ ուսումնասիրութեան կը կարօտի: Միւռոնի օրհնութեան կապակցութեամբ հոս կարելի է երկու հրատարակութիւններ յիշել. P. Hofmeister, Die heiligen öle in der morgen—und abendlandischen Kirche (=Das östliche Christentum, neue Folge, Heft 6/7, Würzburg 1948); P. Menebisoglo , Τὸ ἅγιον μύρον ἐν τῇ Ὀρθοδόξῳ Ἀνατολικῇ Ἐκκλησία (=Analekta Blatadon 14, Thessaloniki 1972).

[6] Օրինակի համար կրնանք յիշել L. Mitchel, Baptismal Anointing (Notre Dame 1978). 77:

[7] Ս. Ճեմճեմեան, «Երախաներու օծումը Հայ Եկեղեցւոյ մէջ», Բազմավէպ 126 (1968), 21—29: Այս յօդուածէն զատ, Հայ Եկեղեցւոյ մկրտութեան խորհուրդի մասին Ճեմճեմեան հրատարակած է նաեւ այլ ուսումնասիրութիւններ, «Կանոն մկրտութեան», «Մկրտութեան արարողութիւնը մաշտոցներու մէջ», Բազմավէպ 129 (1971), 25—35; 180 (1972), 188—210, 381—399; «Մկրտութեան խորհուրդի բանաձեւը», Բազմավէպ 125 (1967), 185—142:

[8] Յովհաննէս Օձնեցի 717 թուին կաթողիկոս ընտրուելէ ետք, Հայ Եկեղեցւոյ ծիսական աւանդութեան մէջ մուտ գործած սխալ սովորութիւնները փորձեց սրբագրել: Այս ծրագրով 720 թուականին (այս թուականը վիճելի է) Դուինի մէջ ժողով մը գումարեց, ուր կարդաց իր նշանաւոր Ատենաբանութիւնը եւ հաստատեց նաեւ 32 կանոններ: Օձնեցիի գրական վաստակը հրատարակուած է, Յովհաննու Իմաստասիրի. Մատենագրութիւնք (Վենետիկ 1953): Կանոնները առանձին հրատարակուած են նաեւ Վ. Հակոբյան, Կանոնագիրք Հայոց I. (Երեւան 1964), 514—537:

3. 9—14-րդ դարերու հայկական աղբիւրները Օձնեցիի վկայութիւնը կը հաստատեն:

4. Հետեւաբար, այս աղբիւրներուն համաձայն, Հայ Եկեղեցին հնագոյն շրջաններէն սկսեալ, մկրտութենէն առաջ երախաներու օծման սովորութիւնը կը կիրարկէր:

Հ. Ճեմճեմեան իր ուսումնասիրութեան մէջ կ'օգտագործէ երեք տարբեր աղբիւրներ.

ա. Յովհաննէս Օձնեցիի Ատենաբանութիւնը[9]:

բ. Մկրտութեան խորհուրդի սովորութեանց մասին միջին եւ յետագայ դարերու վկայութիւնները[10].

գ. Մկրտութեան խորհուրդի ձեռագիր Մաշտոցները[11]:

Յիշեալ աղբիւրներուն մօտէն ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ թէ երեք տարբեր խումբերու վկայութիւնները հետեւեալ երկու տարբեր օծումներու մասին կ'ակնարկեն.

1. Երախաներու օծումը, որ եկեղեցւոյ դռան առջեւ կը կատարուէր (=իբրեւ ապացոյց՝ Օձնեցի եւ այլ հայ մատենագիրներ):

2. Նախա-մկրտութեան օծում մը, որ եկեղեցիէն ներս, յետ իւղի օրհնութեան քարոզը եւ աղօթքը տեղի կ'ունենար (=ձեռագիրներու աւանդութիւնը եւ ներկայ Հայ Եկեղեցւոյ մկրտութեան արարողութեան բնագիրները):

Ճեմճեմեան այս երկու տարբեր օծումներու միջեւ տարբերութիւն չի դներ: Ան կը հաւատայ թէ՝ սկզբնական նախա-մկրտութեան օծումը երախաներու օծումն է, որ Օձնեցիէն առաջ մոռացութեան մատնուած էր: Այս օծումը, ենթադրաբար Օձնեցին վերահաստատեց:

Միւս Արեւելեան Եկեղեցիներու աղբիւրներուն հետ կատարուած բաղդատական ուսումնասիրութիւն մը պիտի յստակեցնէր, մկրտութենէն առաջ կատարուած երկու օծումներու տարբերութիւնները: Օրինակի համար, ինչպէս նախապէս արդէն յիշեցինք, Ասորական հնագոյն աղբիւրները նախա-մկրտութիւն կատարուող օծման մը մասին կը խօսին, որ կը հաղորդակցի Հին Կտակարանի քահանաներուն, թագաւորներուն եւ մարգարէներուն օծման հետ: Ասորական աւանդութեան մէջ, սկզբնական շրջանին, այս նախա-մկրտութեան օծումը մկրտութեան ամէնէն կարեւոր մասը կը կազմէր[12]: Նախա-մկրտութեան այս օծումը, Յորդանան գետի մէջ Յիսուսի մկրտութեան հետ կը հաղորդակցէր, երբ Սուրբ Հոգին աղաւնիի կերպարանքով Յիսուսի վրայ իջաւ:

Prof. Winkler-ի կատարած կարեւոր ուսումնասիրութիւնը հայկական մկրտութեան խորհուրդին կապակցութեամբ, մկրտութեան օծման պատմու-

---

[9] Ճեմճեմեան, «Երախաներու օծումը», 21—22:

[10] Նոյն, 22—24: Ճեմճեմեան հետեւեալ աղբիւրները կ'օգտագործէ. Սարգիս Շնորհալի (12-րդ դար), Ներսէս Լամբրոնացի (12-րդ դար), Մխիթար Գօշ (12—18-րդ դար), Գրիգոր Անաւարզեցի (18-րդ դար), Բարսեղ Մաշկեւորցի (14-րդ դար), եւ Գրիգոր Տաթեւացի (14-րդ դար):

[11] Նոյն, 24—26:

[12] G. Winkler, Das armenische Initiationsritual: eadem, „The Original Meaning of the Prebaptismal Anointing and Its Implication", Worship 52 (1978), 24—45; eadem, „The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", II. Symposium études syriaques Paris 1976 (=Orientalia Christiana Analecta 205, Rome 1978), 317—324; eadem, „Zur frühch-ristlichen Tauftradition in Syrien und Armenien unter Einbezng der Taufe Jesu", Ostkirchliche Studien 27 (1978), 281—306.

թեան մասին կարգ մը հարցերը յստակեցուց[13]: Սակայն Յովհաննէս Օձնեցիի մասին, այս հրատարակութեան բաժինը շատ համառօտ է, ձգելով կարգ մը հարցեր անլուծելի[14]:

Winkler-ի համաձայն, առաջին անգամ ըլլալով մկրտութեան խորհուրդին մէջ երախաներու օծումը, Օձնեցին ներկայացուց: Այս օծումը եկեղեցւոյ դռան առջեւ, հրաժարման եւ խոստովանանքի արարողութեանց հետ միասին կը կատարուէր: Երախաներու օծումը սկզբնական նախա-մկրտութեան օծման (որ եկեղեցիէն ներս մկրտութենէն անմիջապէս առաջ կը կատարուէր) հետ ոչ մէկ կապ ունէր: Winkler կը հաւատայ թէ՝ սկզբնական նախամկրտութեան օծումը Օձնեցիէն առաջ արդէն մոռցուած էր, սակայն այս օծման համար գործածուող իւղի օրհնութեան քարոզը եւ աղօթքը թէ՛ ձեռագիր Մաշտոցներու եւ թէ՛ մկրտութեան խորհուրդի ներկայ արարողութեան մէջ դեռ կը մնան:

Հետեւաբար, Winkler մկրտութենէն առաջ կատարուող, իրարմէ տարբեր հետեւեալ երկու օծումներու կարելիութեանց մասին կը խօսի.

1. Նախա-մկրտութեան օծում մը, որ մկրտութենէն անմիջապէս առաջ եկեղեցւոյ մէջ կը կատարուէր: Ըստ Winkler-ի, այս օծումը Օձնեցիէն առաջ արդէն դադրած էր, սակայն ձեռագիր Մաշտոցներու եւ մկրտութեան խորհուրդի ներկայ արարողութեան մէջ, այս օծման մասին ակնարկութիւններու կը հանդիպինք: (Winkler-ի այն եզրակացութիւնը թէ՝ այս օծումը մկրտութեան խորհուրդի սկզբնական օծումն էր, ընդունելի է):

2. Երախաներու օծում մը, որ եկեղեցւոյ դռան առջեւ, հրաժարական եւ խոստովանանքի արարողութեանց հետ կը կատարուէր: Winkler-ի համաձայն, այս օծումը առաջին անգամ ըլլալով Օձնեցին Հայ Եկեղեցւոյ մկրտութեան արարողութեան մէջ ներկայացուց: Իսկ Ճեմճեմեանի համաձայն, Օձնեցին երախաներու այս օծումը վերահաստատեց:

Հ. Ճեմճեմեանի եւ Winkler-ի եզրակացութիւնները, նախքան մկրտութիւն կատարուող օծման մասին, ամբողջութեամբ ընդունելի չեն: Ուստի, այս ուսումնասիրութեամբ պիտի փորձենք, նախա-մկրտութեան օծմանց մասին Յովհաննէս Օձնեցիի վկայութիւնները վերաքննել, օգտագործելով նաեւ ձեռագիր մաշտոցներու աւանդութիւնը:

ԱՂԲԻՒՐՆԵՐՈՒ ՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ

Այս ուսումնասիրութեան համար երկու հիմնական աղբիւրներ կ՚օգտագործուին.

I. Մկրտութեան խորհուրդի հնագոյն ձեռագիր մաշտոցները (9/10-րդ դար)[15].

II. Յովհաննէս Օձնեցիի Կանոնները եւ Ատենաբանութիւնը[16]

I. Հայաստանեայց Եկեղեցւոյ մկրտութեան խորհուրդը.

Ձեռագիր Մաշտոցներու եւ նաեւ մկրտութեան խորհուրդի ներկայ արարողութեան մէջ, ինչպէս նախապէս արդէն յիշեցինք, միայն մէկ օծում գոյութիւն ունի: Այս օծումը ներկայիս դրոշմ կը կոչուի, եւ այդ մկրտութենէն անմիջապէս ետք կը կատարուի[17]: Ձեռագիր Մաշտոցներու եւ նաեւ մկր-

[13] G. Winkler, Das armenische Initiationsrituale.

[14] Նոյն, 99—100, 385, 898—401:

[15] Նոյն, 184—282:

[16] Տե՛ս թիւ 8:

[17] Մաշտոց, 54—55:

տութեան խորհուրդի ներկայ արարողութեան մէջ, նախքան մկրտութիւն կը-տարուող ջուրի օրհնութենէն անմիջապէս առաջ, իւղի օրհնութեան յաջորդ եւ աղօթքի մը կը հանդիպինք[18]: Արդէն յիշեցինք թէ իւղի օրհնութեան այս քարոզը եւ աղօթքը կրնայ հիմ ծառայել, ապացուցանելու նախա-մկրտութեան օծման մը գոյութիւնը, որ տեղի կունենար եկեղեցիէն ներս, մկրտութենէն անմիջապէս առաջ:

Ասորագէտ բանասէրներէն Connolly-ի[19], Duncan-ի[20], Brock-ի[21], և Murray-ի[22] կատարած ուսումնասիրութիւնները ցոյց տուին թէ՝ Ասորական հնագոյն աղբիւրները մկրտութեան օծման մը մասին կը խօսին: Այս օծումը նախամկրտութեան օծում մըն է, որ տեղի կունենար մկրտութենէն անմիջապէս առաջ: Winkler-ի կատարած բաղդատական ուսումնասիրութիւնները՝ փաստեցին թէ Ասորական հնագոյն աղբիւրներէն զատ Հայկական աղբիւրները եւս (ինչպէս Ագաթանգեղոս) նախա-մկրտութեան օծման մը մասին կ՚ակնարկեն:

Ագաթանգեղոսի Հայոց Պատմութեան մէջ կը հանդիպինք հետեւեալ հատուածին.

> «Իսկ ի լնուլ կիտին եղելոյ պաշոցն կատարելոյ,
> առեալ երանելոյն Գրիգորի զաշխարհաբանակ զօրացն,
> եւ զինքնին զթագաւորն, եւ զկնի նորա Աշխէն, եւ զմեծ օրիորդն Խոսրովիդուխտ,
> եւ զմեծամեծսն ամենայն, եւ ամենայն մարդկաւ բանակին հանդերձ՝
> ընդ այգն ի լուսանալ առաւօտուն յափն Եփրատ գետոյն մատուցանէր,
> եւ անդէն մկրտէր առ հասարակ զամենեսեան
> յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ»[24]:

Յիշեալ հատուածին մէջ Ագաթանգեղոսի Հայոց Պատմութիւնը, Գրիգոր Լուսաւորչի ձեռամբ Տրդատ թագաւորին, Աշխէն թագուհիին, Խոսրովիդուխտին, Հայ մեծամեծներու եւ բանակին, Եփրատ գետին մէջ մկրտութիւնը կը

[18] Մաշտոց, 34—35:

[19] R. H Connolly, The Liturgical Homilies of Narsai (=Texts and Studies 8, Cambridge 1909, reprinted in Nendeln 1967).

[20] E. J Duncan, Baptism in the Demonstrations of Aphraates the Persian Sage (=Studies in Christian Antiquity 8, Washington 1945)

[21] S. Brock, The Holy Spirit in the Syrian Baptismal Tradition (=The Syrian Chnrches Series 9, Kottayam 1979); idem, „The Transition to a Post-Baptismal Anointing in the Antiochene Rite", in B. D. Spinks (ed.) The Sacrifice of Praise. Studies on the Themes of Thanksgiving and Redemption in the Central Prayers of the Eucharistic and Baptismal Liturgies in Honour of Arthur Hubert Couratin (Rome 1981), 215—225; idem, „The Epiklesis in the Antiochene Baptismal Ordines", Orientalia Christiana Analecta 197 (Rome 1974), 183—218:

[22] R, Murray, Symbols of Churc and Kingdom: A Study in Early Syriac Tradition (Cambridge 1975).

[23] G. Winkler, Das armenische Initiationsrituale; eadem, „The Original Meaning of the Prebaptismal Anointing and Its Implication", Worship 52 (1978), 24—45; eadem, „The History of the Syriac Prebaptismal Anointing in the Light of the Earliest Armenian Sources", II. Symposium études syriaques Paris 1976 (=Orientalia Christiana Analecta 205, Rome 1978), 317—324; eadem, „Zur frühchristlichen Tauftradition in Syrien und Armenien unter Einbezng der Taufe Jesu", Ostkirchliche Studien 27 (1978), 281—306.

[24] Ագաթանգեղայ, Պատմութիւն Հայոց, Աշխատութեամբ՝ Գ. Տէր-Մկրտչեան եւ Ստ. Կանայեանց (Տփղիս 1909), 438:

ներկայացնէ: Ագաթանգեղոսի այս հատուածը կը շարունակէ, խօսելով նաեւ մկրտութեան օծման մը մասին.

«Եւ իւղն օծութեան,
զոր արկանէր Գրիգորիոս ի վերայ մարդկանն՝
շրջան առեալ ի մէջ գետոյն շուրջ զմարդկաւն խաղայր»[25]:

Հոս, մկրտութեան համար գործածուող իւղը՝ իւղ օծութեան կը կոչուի: Winkler մկրտութեան իւղի անուանարանութեան մասին կատարած իր ուսումնասիրութեանց մէջ ցոյց կու տայ թէ՝ Ասորական եւ Հայկական հնագոյն աղբիւրներուն մէջ, նախա-մկրտութեան օծման իւղը կը կոչուի **իւղ**, իւղ օծութեան, **իւղ սուրբ**, իւղ սրբութեան, **իւղ ամենասուրբ** (Ասորերէն՝ **մէշխա, մէշխա տա-մըշիխութա**)[26]: Նախա-մկրտութեան օծման համար կիրարկուող իւղը, Ասորական եւ Հայկական աղբիւրներու մէջ, որեւէ ժամանակ միւռոն կոչուած չէ[27]: Հայերէն իւղ օծութեան կը համաձայնի Ասորերէն մըշխա տը-մըշիխութա բառին, որ միայն նախա-մկրտութեան օծման իւղին համար գործածուած անուն մըն է: Ուստի կրնանք ենթադրել թէ՝ Ագաթանգեղոսի մէջ գործածուած իւղ օծութեան-ը նախքան մկրտութիւն կատարուած օծման մը կը վերաբերի:

Նախքան մկրտութիւն կատարուող օծման մասին այլ ակնարկութիւններու կը հանդիպինք նաեւ **Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի** մէջ, որ Ագաթանգեղոսի Հայոց Պատմութեան մաս կը կազմէ[28]: **Վարդապետութեան** մէջ կը բացատրուի թէ՝ Հին Կտակարանի քահանաներուն, թագաւորներուն եւ մարգարէներուն օծումը, Յորդանան գետին մէջ, մկրտութեան պահուն Յովհաննէս Մկրտչի ձեռամբ ինչպէս Յիսուսին տրուեցաւ.

«եւ նա [Յովհաննէս] ետ
զքահանայութիւնն, զօծութիւնն, զմարգարէութիւնն եւ զթագաւորութիւնն
գՏէր մեր Յիսուս Քրիստոս»[29]:

Մկրտութեան մասին Հայկական հնագոյն աղբիւրը՝ **Ագաթանգեղայ** Պատմութիւն Հայոցը քննելէ ետք, այժմ տեսնենք հնագոյն ձեռագիր Մաշտոցները, եւ մկրտութեան խորհուրդի ներկայ արարողութիւնը:

Այս ուսումնասիրութեան սկիզբը իւղի օրհնութեան քարոզին եւ աղօթքին (որ կը գտնուին թէ՝ հնագոյն ձեռագիր Մաշտոցներուն եւ թէ՝ ներկայ արարողութեան մէջ, ջուրի օրհնութենէն անմիջապէս առաջ) աշխարհաբար թարգմանութիւնը ներկայացուցինք: Նաեւ փորձեցինք ցոյց տալ թէ ժամանակին, այս քարոզը եւ աղօթքը, մեծ հաւանականութեամբ մկրտութեան օծման մը հետ միացած էին, որ մկրտութենէն անմիջապէս առաջ կը կատարուէր: Այս օծումը Հին Կտակարանի քահանաներու, թագաւորներու եւ մարգարէներու օծման հետ կապուած էր: Այս նոյն կապը տեսանք նաեւ **Վարդապետութեան** մէջ:

---

[25] Նոյն, 434:

[26] Winkler, „The Original Meaning", 26 eadem. Das armenische Initionsrituale 405—423.

[27] Առաջին անգամ Յովհան Օձնեցին է (շուրջ 847—407), որ նախամկրտութեան օծման իւղին համար միւռոն բառը կը գործածէ. մինչ միւս աղբիւրներու մէջ միւռոնը միայն յետ-մկրտութեան օծման իւղին յատուկ է, տե՛ս Winkler, „The Original Meaning", 23:

[28] Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի միացած է Ագաթանգեղայ (թիւ 259—715), 184—872:

[29] Ագաթանգեղոս, 215:

Եւ յիշեցինք թէ՝ մկրտութեան օծման Հին Կտակարանի քահանաներուն, թագաւորներուն եւ մարգարէներուն հետ կապակցութիւնը թէ Արեւելեան եւ թէ Արեւմտեան աւանդութեանց մէջ կը տեսնուին. սակայն միայն մէկ տարբերութեամբ: Յունական եւ Լատինական աւանդութեանց մէջ այս պատկերաւորումը միացած է յետ-մկրտութեան օծման, իսկ Ասորական եւ Հայկական աւանդութեանց մէջ նախա-մկրտութեան օծման հետ:

Այժմ, նախ-մկրտութեան օծման մասին հնագոյն Ասորական աղբիւրները տեսնենք:

Didascalia Apostolorum, որ երրորդ դարու սկիզբը Ասորիքի մէջ, հրէականութենէ Քրիստոնեայ դարձած բժիշկի մը կողմէ կազմուած եկեղեցական կանոններու հաւաքածոյ մըն է[30], մկրտութեան օծման մասին ունի հետեւեալ հատուածը.

«Ինչպէս նախապէս Հրէաստանի քահանաները եւ թագաւորները
կ'օծուէին
այդ ըրէք նոյն ձեւով՝ ձեռնադրութեամբ,
օծեցէք գլուխները անոնց որոնք կը մկրտուին...»[31]:

Հոս յիշուած օծումը նախա-մկրտութեան օծման կը վերաբերի, որուն ընթացքին մկրտուողին ամբողջ գլուխը իւղով կ'օծուէր:

Նախա-մկրտութեան օծման մասին նոյն ձեւի ակնարկութեանց կը հանդիպինք նաեւ Եփրեմ Խուրի Ասորիի, Յակոբ Մծբնացիի (Աֆրահատայ զգոն Պարսկի), Յակոբ Սարուգեցիի (Յակոբ Սրճեցի)[32] մատենագրութեանց մէջ:

Եփրեմ Խուրի Ասորի նախա-մկրտութեան օծումը հետեւեալ ձեւով կը բացատրէ.

«Այս իւղը Սուրբ Հոգիին սիրելի բարեկամն է,
Անոր կը սպասարկէ, եւ աշակերտի նման Անոր կը հետեւի:
Անով [իւղով] Սուրբ Հոգին քահանաներ կնքեց եւ թագաւորներ օծեց,
որովհետեւ Սուրբ Հոգին իւղով իր կնիքը կը կնքէ իր հոտին:
Ինչպէս կնքիչ մատանին, որուն կնիքը կը մնայ կնքամոմին վրայ,
նոյնպէս Սուրբ Հոգիին թագուցեալ կնիքը իւղով կը կնքուի
մարմիններուն վրայ անոնց, որոնք մկրտութեան ընթացքին կ'օծուին»[33]:

Այս հատուածին յաջորդ բաժինը կը պարզէ թէ՝ Եփրեմի յիշած օծումը նախա-մկրտութեան օծում մըն է.

«Քահանայութիւնը կը սպասարկէ այս արգանդին, ինչպէս այդ ծնունդ
կու տայ,
օծումը առոր կը կանխէ.....»[34]:

---

[30] Didascalia Apostolorum-ի Ասորերէն բնագիրը հրատարակած է P. de Lagarde (Leipzig, 1854). իսկ Լատիներէն բնագիրը մասամբ կազմված է F. X. Funk, Didascalia et Constitutiones Apostolorum (2nd ed., Paderborn 1905).

[31] Didascalia-ի այս հատուածը հայերէնի թարգմանուած է Winkler, „The Original Meaning", 36, յօդուածէն:

[32] Տե՛ս S. Brock, „Baptismal Themes in the Writings of Jacob of Serugh", Orientalia Christiana Analecta 205 (Rome 1976), 329.

[33] Ephrem, de virginitate VII, 6 մէջբերուած է S. Brock, The Harp of the Spirit (=Studies Supplementary to Sobornost number 4, Oxford 1975). 50, հրատարակութեան մէջ:

[34] Նոյն.

Եփրեմ Ասորին իր նշանաւոր Մեկնութիւն Աւետարանի Համարարբաո-ին (Diatessaron) մէջ (գլուխ Դ, 3), մկրտութեան օծումը, Յորդանան գետին մէջ Յիսուսի օծման հետ կը նոյնացնէ.

«Եւ վկայեաց Հոգին
որ հանգեաւ ի վերայ նորա ի մկրտել նորա՝
թէ նա է հովիւ.
զի ընկալաւ նա ի ձեռն Յովհաննու զքահանայութիւն, զարքայութիւն
եւ զմարգարէութիւն»[35]:

Նոյն պատկերաւորումը տեսանք նաեւ Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի մէջ: Այս երկու գրութեանց մէջ եղած նմանութիւնը ցոյց կուտայ թէ՝ փոխանձման գաղափարը Հայկական աւանդութեան մէջ, հաւանարար Ասորական աղբիւրներէն առնուած է:

Հին Կտակարանի այս փոխանձման գաղափարը զարմանալի չէ, քանի Հին Ուխտի մէջ նորընտիր թագաւորի օծումը Սուրբ Հոգիի իջման հետ կապուած էր («Եւ առ Սամուէլ զեղջեւրն իւղոյ, եւ օծ զնա [Դաւիթ] ի մէջ եղբարց իւրոց. եւ խաղաց Հոգի Տեառն ի վերայ Դաւթի յօրէ յայնմանէ եւ առ յապա» [Ա. Թագ. 16:13]: Սուրբ Հոգիի հետ կապ ունեցող օծման նոյն գաղափարը, ըստ Ասորական եւ Հայկական աղբիւրներու, կը տեսնուի նաեւ Յորդանան գետի մէջ Յիսուսի մկրտութեան պահուն: Զմոռնանք յիշելու թէ՝ Աւետարաններու մէջ Յիսուսի Յորդանան օծման մասին ուղղակի ակնարկութեան չենք հանդիպիր: Սակայն, մկրտութեան պահուն Սուրբ Հոգիին աղաւնակերպ Յիսուսին վրայ իջնելը եւ Հօր յայտարարութիւնը թէ՝ «դա է Որդի իմ սիրելի», կրնայ իբրեւ անուղղակի օծում հասկցուիլ: Նաեւ Գործք Առաքելոց 10:38-ի մէջ, Յիսուս ներկայացուցած է մէկը, որ «օծն Աստուած Հոգւով Սրբով եւ զօրութեամբ»:

Հին Ասորական եւ Հայկական աղբիւրներուն մէջ գտնուող մկրտութեան աւազանի մասին նկարագրութիւնները եւս, ցոյց կու տան թէ՝ մկրտութեան խորհուրդը որքան մօտէն ընդօրինակուած է, Յորդանան գետի մէջ Յիսուսի մկրտութենէն: Հին այս աղբիւրներուն մէջ, մկրտութիւնը իբրեւ արգանդ ներկայացուած է, որ ծնունդ կու տայ անկեալ Ադամին, բովանդակելով նաեւ Յովհաննու Աւետարանչի բացատրութիւնը, «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ եւ ի հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Յով 3:5): Այս աղբիւրներու մէջ, մկրտութիւնը բնաւ իբրեւ գերեզման նկարագրուած չէ: Իբրեւ օրինակ կրնանք յիշել Եփրեմ Խուրիի հետեւեալ բանաստեղծութեան մէկ հատուածը.

«Մարմինները կ'օծուին ընտիր իւղով թողութեան համար,
մարմիններ, որոնք լեցուած էին աղտեղութեամբ
առանց ճիգի անոնք կը սպիտակացուին.
Անոնք, աղտեղի մեղքով վար կ'իջնեն
Վեր կ'ելլեն մաքուր, մանուկի նման
որովհետեւ մկրտութիւնը անոնց համար երկրորդ արգանդն է»[36]:

---

[35] L. Leloir, Saint Eprem, Commentarie de l'Evangile Concordant. Version arménienne (=CSCO 137+145 Louvain 1953—1954), I 47.

[36] de virginitate VII, 7, յիշուած է Brock, The Harp, 50-ին մէջ:

Հոս՝ Եփրեմ ինկած մարդուն վերստին ծննդեան մասին կը խօսի: Իսկ բանաստեղծութեան յաջորդ տան մէջ, մկրտութիւնը եւ մկրտութեան օծումը, Ծննդոց Գիրքի լոյսին տակ բացատրուած են.

«Քահանայութիւնը կը սպասարկէ այս արգանդին, ինչպէս այդ ծնունդ կու տայ:
Օծումը ասոր կը կանխէ
Սուրբ Հոգին անոր հոսանքներուն վրայ կը շրջի [Gn1:2][37]:

Վարդապետութիւն Սրբոյն Գրիգորի եւս մկրտութեան ջուրը, ստեղծագործութեան ջուրերուն հետ կը նոյնացնէ.

«Եւ վասն զի զերկիր զառաջինն ի ջուրցն փարատեցուցեալ հրամանաւ,
եւ ջրովն պարարեալ՝ ամենայն բոյսք եւ զեռունքն.....
սոյն օրինակ դալարեցոյց զարգանդ ծննդականութեանն ջուրցըն՝ մկրտութեան»[38]:

Հայ եկեղեցւոյ ներկայ մկրտութեան խորհուրդի արարողութեան մէջ երկու շարականներ կան, որոնք նոյնպէս վերստին ծննդեան մասին կ՚ակնարկեն.

«Որ արարչակից ես Հօր եւ Որդւոյ,
որով կենդանածնեալք ի ջուրս արարածք.
այսօր Որդիս Աստուծոյ ծնանիս ի ջուրց.
Հոգի Աստուծոյ ողորմեաւ»[39]:

«Որ ի վերայ ջուրցն գոլով
ստեղծէիր զարարածս.
իջեալ ի ջուրս աւազանին
ծնանիս որդիս Աստուծոյ»[40]:

Եզրակացնելով կրնանք ըսել թէ՝ Ասորական եւ Հայկական հնագոյն աղբիւրները՝ կը խօսին՝

1. նախքան մկրտութիւն կատարուող օծման մը մասին, որ Հին Ուխտի քահանաներու, թագաւորներու եւ մարգարէներու օծման եւ Յիսուսի Յորդանան գետի մէջ մկրտութեան հետ կապուած է.

2. եւ թէ՝ մկրտութեան ջուրը իբրեւ արգանդ պատկերացուած է, որ Սուրբ Հոգիի իշմամբ՝ արարածներուն ծնունդ կու տայ: Հին այս գրութեանց մէջ մկրտութիւնը Յովհաննու Աւետարանին 3:5 խորհրդով բացատրուած է, նոյն ատեն Ծննդոցի ստեղծագործութեան պատկերը եւս յիշելով:

Չորրորդ դարու երկրորդ կէսէն ետք, Ասորա-Պաղեստինի մէջ մկրտութեան այս հին հասկացողութիւնը փոփոխութեան ենթարկուեցաւ: Փոփոխութեան պատճառը Քրիստոսաբանական վէճերն էին: Սկզբնական սովորութեան հակառակ, ուր մկրտութեան պատրաստութիւնը հաւատքի ուսուցման շուրջ կեդրոնացած էր, այժմ չարին, սատանային դէմ կռիւի պահ ներկայացուեցաւ: Հետեւաբար մկրտութեան կանխեց մեղքերէն մաքրուելու ու սատանայէն ձեռբազատուելու արարողութիւնը:

Սուրբ Հոգին, նախքան մաքրուիլ եւ սրբուիլը ստանալը կարելի չէր:

[37] Նոյն:
[38] Ագաթանգեղոս, 205:
[39] Մաշտոց, 47—48:
[40] Մաշտոց, 50—51:

Ուստի, յետ-մկրտութեան օծում մը ներկայացուեցաւ, որուն ընթացքին, նոր մկրտուողը Սուրբ Հոգին կը ստանար: Այս փոփոխութիւնը Յովհան Ոսկեբերանի եւ Կիւրեղ Երուսաղէմացիի գրութեանց մէջ կը տեսնենք:

Յովհան Ոսկեբերան (շուրջ 347—407) յետ-մկրտութեան օծման դեռ ծանօթ չէ: Սակայն, ան Հին Կտակարանի քահանաներու, թագաւորներու եւ մարգարէներու օծման խորհուրդը (որ սկիզբը նախա-մկրտութեան օծման հետ կապուած էր) աւազանի մէջ մկրտութեան կը միացնէ: Նախա-մկրտութեան օծման իւղը, որ նախապէս իւղ, իւղ օծութեան, կամ իւղ սուրբ կը կոչուէր եւ Սուրբ Հոգիի իջման հետ կապուած էր, Ոսկեբերանի գրութեանց մէջ նոր անուն ու իմաստ կը ստանայ: Ոսկեբերան նախա-մկրտութեան օծման իւղը միւռոն կը կոչէ, որ օծուողը մեղքերէն կը մաքրէ եւ կը սրբէ[41]:

Առաջին անգամ ըլլալով Կիւրեղ Երուսաղէմացի (315—386) իր Կոչումն Ընծայութեան մէջ յետ-մկրտութեան օծման մը մասին կ'ակնարկէ, որ Սուրբ Հոգիի իջման խորհուրդին հետ կապուած է: Նախա-մկրտութեան օծման իւղը, Կիւրեղ Երդմնեցուցիչ իւղ կը կոչէ[42]:

Մկրտուող անձը այլեւս Յիսուսի Յորդանան գետի մէջ մկրտութեան հետ չի նոյնացուիր, այլ Անոր թաղման եւ յարութեան: Մկրտութեան ջուրին մէջ երիցս ընկղմումը, այժմ Քրիստուի երեք օրուան թաղումը կը նշանակէ[43]: Մկրտութեան աւազանը, որ նախապէս հոգեւոր արգանդի խորհուրդը կը ներկայացնէր, հիմա իբրեւ գերեզման կը տեսնուի: Հետեւաբար Չորրորդ դարու վերջաւորութեան, Պօղոս Առաքեալի մկրտութեան հասկացողութիւնը (Հռոմ. 6:3—4) ընդունելի դարձաւ նաեւ Ասորա-Պաղեստինի մէջ—«Եթէ ո՞չ գիտէք զի որ միանգամ մկրտեցաք ի Քրիստոս Յիսուս՝ ի մահ անդր նորա մկրտեցաք: Թաղեցաք ընդ նմին մկրտութեամբն ի մահ, զի որպէս յարեաւ Քրիստոս ի մեռելոց փառօքն Հօր, նոյնպէս եւ մեք ի նորոգումն կենաց շրջեսցուք»:

Մկրտութեան խորհուրդի իմաստի մասին, Չորրորդ դարու Ասորա-Պաղեստինեան հասկացողութիւնը, հաւանաբար Հինգերորդ դարուն Հայաստան եւս հասաւ: Եւ անով, Հայկական մկրտութեան արարողութեան մէջ եւս յետ-մկրտութեան օծում մը ներկայացուեցաւ: Սակայն, ձեռագիր Մաշտոցներու եւ ներկայ մկրտութեան խորհուրդի արարողութեան մէջ, նախքան ջուրի օրհնութիւնը գտնուող իւղի օրհնութեան քարոզը եւ աղօթքը, սկզբնական նախա-մկրտութեան օծման դիրքը եւ իմաստը կը ներկայացնեն:

II. Օձնեցիի Կանոնները եւ Ատենաբանութիւնը.

Ասորական եւ Հայկական հնագոյն աղբիւրները, ձեռագիր Մաշտոցներու աւանդութիւնը եւ մկրտութեան խորհուրդի ներկայ արարողութիւնը քննելէ ետք, այժմ Յովհաննէս Օձնեցիի՝ մկրտութեան խորհուրդի կապակցութեամբ գրած Կանոնները եւ Ատենաբանութիւնը պիտի ուսումնասիրենք:

Յովհաննէս Օձնեցի եղաւ այն նշանաւոր կաթողիկոսը, որ Հայ Եկեղեցիէն ներս մտած ծիսական եւ այլ սխալ սովորութիւնները, փորձեց ութերորդ դարու սկիզբը սրբագրել: Օձնեցիի բարեկարգութեանց մասին կը տեսնենք իր Կանոններուն եւ Ատենաբանութեան մէջ:

---

[41] Տես Winkler, „The Original Meaning", 41:

[42] Mystagogical Catecheses 2,3 յիշուած է Winkler, „The Original Meaning", 41, յօդուածին մէջ:

[43] Նոյն:

Օձնեցիի Կանոնները եւ Ատենաբանութիւնը մեծ հաւանականութեամբ մկրտութեան հետեւեալ երեք տարբեր օծումներուն մասին կ՝ակնարկեն.

1. Երախաներու օծում, որ եկեղեցւոյ դռան առջեւ տեղի կունենայ:

2. Նախա-մկրտութեան օծում, որ եկեղեցիէն ներս, մկրտութենէն անմիջապէս առաջ կը կատարուի:

3. Յետ-մկրտութեան օծում, որ մկրտութեան կը հետեւի:

1. Երախաներու օծում:

Օձնեցիի 14-րդ կանոնը, երախաներու օծման մը մասին կ՝ակնարկէ, որ մկրտարանէն դուրս, մկրտութեան հրաժարման եւ խոստովանանքին հետ միասին տեղի կունենայ.

«Պարտ եւ արժան է
զերեխայիցն ձեռնադրութիւն եւ զաւծումն
եւ զհրաժարելն եւ զխոստովանելն
առ դուրս մկրտարանին կատարել...»[44]:

Այս կանոն-ին համաձայն, մկրտարանէն դուրս հետեւեալ կարգով արարողութիւնները կը կատարուին.

ա. երախաներու ձեռնադրութիւն եւ օծում.
բ. հրաժարում.
գ. խոստովանանք.

Իսկ Օձնեցիի 10-րդ կանոնին մէջ կը տեսնենք թէ՝ երախաներու օծման իւղը, պէտք է քահանան նոյն օրը օծման պահուն ինքը օրհնէ.

«Պարտ եւ արժան է զմկրտութեանն ձէթ
քահանային աւրհնել
մի ըստ միոջէ ընդ մկրտելն
ըստ բաւականի ժամուն պիտոյից....
միայն աւծանել նովաւ զերախայսն
եւ զմկրտեալսն ընդ մկրտելն յաւազանին»[45]:

Օձնեցին իր Ատենաբանութեան մէջ զարմանալիօրէն երախաներու օծումը դրոշմ կը կոչէ.

«Երախայութեան օծումն զհրաւիրականն ունի դրոշմ»[46]:

Դրոշմը իբրեւ կառուցուածք եւ իմաստ, նախապէս Ասորերէն ռուշմային կը համապատասխանէր[47]: Ասորերէն ռուշման եւ Հայերէն դրոշմը սկզբնական նախա-մկրտութեան օծման համար գործածուած տեխնիկական բառ մըն է: Այս բառը նախապէս երախաներու օծման համար գործածուած չէր: Հայ հին մատենագրութեան մէջ առաջին անգամ Օձնեցին է, որ դրոշմ բառը երախաներու օծման համար կը գործածէ: Հետեւաբար կրնանք ենթադրել թէ՝ Օձնեցիի ժամանակ դրոշմը միայն սկզբնական նախա-մկրտութեան օծման համար չէ, այլ մկրտութենէն առաջ կատարուող որեւէ օծման համար կ՝օգ-

---

[44] Հակոբյան, Կանոնագիրք I, 521:

[45] Նոյն, 520:

[46] Յովհաննու ...Մատենագրութիւնք, 16:

[47] Լեզուագիտական հետազոտութեան համար տե՛ս G. Cardona, "Etudes étymologiques dom:ine arménien", Bulletin international de documentation linguistique 16 (1966) 489—492.

տագործուէր: Ասորական աւանդութեան մէջ, 9-րդ դարուն ապրող Անանուն Արեւելեան Ասորի մատենագիր մը եւ, մկրտարանի դուսն առջեւ նախքան մկրտութիւն կատարուող երախաներու օծման համար՝ ռուշմա բառը կը գործածէ: Անանուն այս մատենագիրը 9-րդ դարուն ապրած է, սակայն բանասէրներ ապացուցած են թէ՝ ծիսական սովորութիւնները, որոնց մասին կը բացատրէ, 7-րդ դարու ծիսական աւանդութիւններն են[18]: Ուրեմն, նախքան մկրտութիւն (մկրտարանէն դուրս) երախաներու օծման համար, Օձնեցիի եւ Անանուն մատենագրի գործածած բառին միջեւ նմանութիւն կը գտնենք: Այս թերեւս ապացոյց մըն է, ենթադրելու թէ՝ Օձնեցիի ժամանակ Հայկական մկրտութեան արարողութեան մէջ, մկրտարանէն դուրս երախաներու օծման սովորութիւնը Ասորական ազդեցութիւն մըն է[19]:

2. **Նախա-մկրտութեան օծում.**

Մկրտարանէն 'դուրս տեղի ունեցող երախաներու օծումէն զատ, Օձնեցին երկրորդ օծման մը մասին եւս կը խօսի, որ մեծ հաւանականութեամբ մկրտութենէն անմիջապէս առաջ, մկրտարանի մէջ կը կատարուէր:

Օձնեցիի 10-րդ կանոնին համաձայն, երախաներու օծման համար գործածուող նոյն իւղը կը կիրարկուի նաեւ այս երկրորդ նախքան մկրտութիւն տեղի ունեցող օծման համար.

«Պարտ եւ արժան է զմկրտութեան ձէթ
քահանային աւրհնել....

միայն աւծանել նովաւ զերախայսն
եւ զմկրտեալսն ընդ մկրտելն յաւազանին»[50]:

Յիշեալ կանոնին վերջին տողը մեծ հաւանականութեամբ օծման մը մասին կ'ակնարկէ, որ աւազանին ջուրով մկրտութեան կը կանխէ: Այս օծումը չի կրնար յետ-մկրտութեան օծումը ըլլալ, քանի յետ-մկրտութեան օծման իւղը, ինչպէս պիտի տեսնենք, միայն կաթողիկոսը կ'օրհնէ, ոչ թէ քահանան: Բացի այս, Օձնեցին իր Ատենաբանութեան հետեւեալ հատուածին մէջ, հաւանաբար կ'ակնարկէ նոյն այս նախա-մկրտութեան օծման մասին.

«Եւ աւազանի օծումն՝ զըստ Հոգւոյն մեզ յարմար է վերստին ծնունդ»[51]:

Մկրտութենէն անմիջապէս առաջ կատարուող այս օծումը Հայ Եկեղեցւոյ մկրտութեան խորհուրդին սկզբնական օծումն էր:

3. **Յետ-մկրտութեան օծում.**

Օձնեցի իր 9-րդ կանոնին մէջ մկրտութեան յաջորդող օծման մը մասին կը խօսի:

«առ մկրտեալսն մատուցանել յորդեգրութեանն աւծումնն
որ յետ մկրտութեանն լինի»[52].

---

[48] Տե՛ս R. H. Connolly (ed.), Anonymi Auctoris Expositio Officiorum Ecclesiae Georgio Arbelensi vulgo adscripta, accedit Abrahae bar Lipheh Interpretatio Officiorum (=CSCO, 76, =Sersyri 32, Louvain 1954), 99: Աւելի տեղեկութեանց համար տե՛ս Winkler, Das armenische Initiationsrituale, 400:

[49] Տե՛ս Winkler, Das armenische Initiationsrituale, 399:

[50] Հակոբյան, Կանոնագիրք I., 520:

[51] Յովհաննու... Մատենագրութիւնք, 16:

[52] Հակոբյան, Կանոնագիրք I, 520:

Օձնեցին յեկ-մկրտութեան օծման իւղը միւռոն կը կոչէ: Եւ ան կը պնդէ թէ այս միւռոնը միայն կաթողիկոսը կրնայ օրհնել.

«Պարտ եւ արժան է զսուրբ միւռոնն
այսինքն՝ զիւղ անուշահոտութեան,
հայրապետին աւրհնել....
եւ քահանայից ի նոցանէ ընդունել...
եւ մի ինքեսեմբ յանդգնեսցի աւրհնել քահանայն»[53]:

Ինչպէս յիշեցինք, Օձնեցիի ժամանակ Հայկական մկրտութեան արարողութեան մէջ երեք տարբեր օծումներ գոյութիւն ունէին.

ա. երախայից օծում (եկեղեցիին դուռն առջեւ).

բ. նախա-մկրտութեան օծում (մկրտարանին մէջ, մկրտութենէն անմիջապէս առաջ).

գ. յետ-մկրտութեան օծում.

Մկրտութեան կանխող երկու տարբեր օծումներուն իւղը, նոյն պահուն քահանան ինք, իսկ յետ մկրտութեան միւռոնը միայն կաթողիկոսը կ'օրհնէ: Սակայն, ինչպէս Օձնեցիի Ատենաբանութեան մէջ կը կարդանք, նոյն շրջանին, տարբեր իւղերու կապակցութեամբ, երկու տեսակ զեղծումներ գոյութիւն ունին:

[Առաջին զեղծում]

«Քանզի յոյժ օտարաբար նովաւ եւ այլապէս ի միմեանց վարիմք.....
Քահանայից ձէթ ընդունել յԵրուսաղէմ բերեալ.....
եւ զնոյն նովին ամանօք առ մի ըստ միոջէ մկրտեալսն իւրաքանչիւր
ումեք վերստին օրհնել....
որպէս թէ բազում անգամ օրհնութեամբքն յոլովագոյնս ի ներքս յեւղն
կոչել զշնորհն
եւ կամ թէ ի գալստենէ նորոյ շնորհին զհնացեալն ի բաց մերժել յա-
մանոյ անտի»:

[Երկրորդ զեղծում]

«Եւ դարձեալ նովին ձիթով օծանէին զմկրտեալսն եւ զերախայսն
այլ եւ զհիւանդս եւ զեկեղեցիս եւ զսեղանս եւ զխաչս»[54]:

Առաջին հատուածին մէջ, Օձնեցին համաձայն չէ, անոնց, որոնք ամէն մէկ կիրարկութեան ժամանակ, իւղը կրկին կ'օրհնեն: Նոյն իւղի բազում օրհնութիւնը մէջի Սուրբ Հոգիի զօրութիւնը չի բազմապատկեր:

Օձնեցի իւղի կրկին օրհնութեան մասին իր անհամաձայնութիւնը կը յայտնէ նաեւ իր 10-րդ կանոնին մէջ.

«Եւ մի իշխել զմիանգամ աւրհնեալն բազում անգամ աւրհնել»[55]:

Երկրորդ հատուածին մէջ Օձնեցին նոյն իւղին՝ մկրտութեան օծմանց, եկեղեցիներու, խաչերու եւ հիւանդաց օծման սխալ գործածութեան մասին կը խօսի: Այս հատուածը աւելի կը յստականայ, երբ 9-րդ եւ 10-րդ կանոնները նկատի կ'ունենանք: 9-րդ կանոնին մէջ միայն կաթողիկոսն է, որ յետ-մկրտութեան օծման միւռոնը կ'օրհնէ: Կաթողիկոսին օրհնած այս միւռոնը կը գործածուի նաեւ խորաններու, եկեղեցիներու եւ խաչերու օծման համար[56]:

[53] Նոյն, 519—520:
[54] Յովհաննու ...Մատենագրութիւնք, 16:
[55] Հակոբյան, Կանոնագիրք I, 520:
[56] Նոյն, 519:

Իսկ 10-րդ կանոնին համաձայն, նախքան մկրտութիւն կատարուող օծմանց իւղը, քահանան նոյն պահուն ինք կ'օրհնէ[57]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ.

Այս ուսումնասիրութեամբ, փորձեցինք Յովհաննէս Օձնեցիի ժամանակ մկրտութեան օծմանց կապակցութեամբ, Հ. Սահակ Ծեմճեմեանի եւ Prof. G Winkler-ի թելադրութիւնները յստակեցնել:

Հ. Ծեմճեմեանի համաձայն, հայկական աւանդութեան մէջ մկրտութեան սկզբնական օծումը երախաներու օծումն էր, որ 8-րդ դարէն առաջ արդէն մոռացութեան մատնուած էր: Օձնեցին իր բարեկարգութեանց միջոցին զայն վերա-հաստատեց: Իսկ Winkler -ի թելադրութիւնը Ծեմճեմեանէն տարբեր է: Winkler կը հաւատայ թէ՝ սկզբնական օծումը երախաներու օծումը չէր, այլ նախա-մկրտութեան օծումն էր, որ մկրտարանի մէջ մկրտութենէն անմիջապէս առաջ կը կատարուէր: Սկզբնական այս օծումը Օձնեցիէն առաջ մոռցուած էր, եւ ան փոխանակ կորսուած այս հին օծումը վերա-հաստատելու, իր բարեկարգութեանց շրջանին ամբողջովին նոր օծում մը ներկայացուց: Այս նոր օծումը եկեղեցւոյ դռան առաջ կատարուող երախաներու օծումն էր:

Հայ Եկեղեցւոյ աւանդութեան մէջ նախաս-մկրտութեան օծման ծագման մասին Winkler-ի տեսակէտը ընդունելի է: Այս ուսումնասիրութեան սկիզբը, հետեւելով Winkler-ի հետազօտութեանց, ցոյց տուինք թէ՝ հին Ասորական եւ Հայկական աղբիւրները եւ Հայկական ձեռագիր Մաշտոցները սկզբնական նախա-մկրտութեան օծման մը մասին կ'ակնարկեն, որ եկեղեցիէն ներս մկրտութենէն անմիջապես առաջ կը կատարուէր: Սկզբնական այս օծումը պէտք չէ շփոթել երախաներու օծման հետ, որ եկեղեցիէն դուրս նախքան հրաժարումը եւ խոստովանանքը տեղի կ'ունենար: Ուստի, Հ. Ծեմճեմեանի տեսակէտը ընդունելի չէ, քանի ան կը փորձէ երախաներու օծումը նախա-մկրտութեան սկզբնական օծման հետ նոյնացնել:

Փորձեցինք ցոյց տալ թէ՝ նախաս-մկրտութեան սկզբնական օծումը Օձնեցիի ժամանակ դեռ գոյութիւն ունէր: Հետեւաբար Winkler-ի տեսակէտը թէ նախա-մկրտութեան սկզբնական օծումը Օձնեցիէն առաջ արդէն մոռցուած էր, բարեփոխութեան պէտք ունի:

Օձնեցիի շրջանին գոյութիւն ունէր նաեւ երախաներու օծումը, ինչպէս տեսանք իր Ատենաբանութեան հետեւեալ հատուածին մէջ.

«Եւ դարձեալ նովին ձիթով օծանէին զմկրտեալսն եւ զերախայսն այլ եւ զհիւանդս եւ զեկեղեցիս եւ զսեղանս եւ զխաչս»[58]:

Հոս, Օձնեցին կը խօսի անոնց մասին, որոնք մկրտուողներու, երախաներու, հիւանդներու, եկեղեցիներու, խաչերու եւ սեղաններու օծման համար նոյն իւղը կը գործածեն: Այս շարքին մէջ երախաներու օծման յիշատակութեան ալ կը հանդիպինք:

Ատենաբանութեան ուրիշ մէկ հատուածին մէջ Օձնեցին կը գանգատի անոնց մասին, որոնք մկրտութենէ առաջ ոչ հրաժարումը, ոչ խոստովանանքը եւ ոչ ալ երախաներու օծումը կը կատարեն.

«զի ոմանք զառ ի մկրտութիւն գալ հանդերձելոցն՝
զհրաժարելոյն ի սատանայէ՝ նոցա հարցմամբ ի վերայ ոչ բերեն
զերդումս

[57] Նոյն, 520:
[58] Յովհաննու ...Մատենագրութիւնք, 16:

եւ ոչ արքոյ Երրորդութեանն խոստովանութիւնն
եւ ոչ յերախայութեանն նախկին մատուցանեն ձեռնադրութեամբ
յօծումն»[59]:

Այս հատուածներուն մէջ յիշուած երախաներու օծումը, մեծ հաւանականութեամբ նոյն այդ օծումն էր, որ եկեղեցիէն դուրս հրաժարման եւ խոստովանանքի արարողութեանց հետ միասին կը կատարուէր: Օձնեցիի ժամանակ երախաներու այս օծումը արդէն գոյութիւն ունէր, միայն թէ ոմանք զայն զանց կ'առնէին եւ ուրիշներ երախաներու այս օծման համար, հիւանդներու, եկեղեցիներու, խաչերու եւ սեղաններու օծման նոյն իւղը կը գործածէին: Օձնեցին փորձեց այս սխալ սովորութիւնները բարեկարգել: Հետեւաբար, Օձնեցին չէ որ երախաներու օծումը առաջին անգամ ըլլալով հաստատեց (ինչպէս Winkler կը հաւատայ), եւ ոչ ալ վերա հաստատեց (Ծեմճեմեանի համաձայն):

---

[59] Նոյն. 17: